

ՀՏԴ 929:792.8(479.25) Օհանեան + 929:891.981 Զօպանեան

Doi:10.54503/0135-0536-2024.3-157

ԱՐՄԵՆ ՕՀԱՆԵԱՆ - ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ*

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՆՍԵԱՆ, ԱՐԾՈՒՒ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Բանալի բառեր՝ Արմէն Օհանեան, Արշակ Զօպանեան, նամակագրութիւն, ստեղծագործական եւ բարեկամական յարաբերութիւններ, հայանպաստ ձեռնարկներ Փարիզում, Անատոլ Ֆրանս:

Նախաբան

Անցեալի հայ ականաւոր կանանց դիմաստրաֆի ամենաինքնատիպ դէմքերից մէկը պարուհի, գրող, գրականագէտ Արմէն Օհանեանն է (Սոֆեա Փիրբուղադեան, 1888, Շամախի – 1976, Մելիկո): Եղել է դերասանուհի՝ Կովկասում, թատերական բեմադրիչ՝ Պարսկաստանում, գրող՝ Ֆրանսիայում եւ գրականագէտ ու թարգմանիչ՝ Մեքսիկայում, սակայն հռչակուել է որպէս ինքնատիպ պարուհի՝ Եւրոպայում, Միջին Արեւելքում եւ Ամերիկայում՝ «Շամախեցի պարուհի» եւ «Պարսիկ պարուհի» մակդիրներով:



Սկսած 1910-ից մենագրւելով ելոյթներ է ունեցել աշխարհով մէկ՝ համագրելով արեւելեան պարը տուեալ ժամանակաշրջանում տարածուած «ազատ» պարաոճի հետ: Նրա պարերը մաս են կազմել Արեւմուտքի մէջ տարածուած Մերձաւոր եւ Հեռաւոր Արեւելքի պարերի այն ալիքին, որոնց մեկնաբաններն իրենց բնիկ մշակոյթից անուած պարաբանութեամբ են ներկայացրել: Նշանաւոր նկարիչներ

եւ քանդակագործներ պատկերել են Արմէն Օհանեանին, մի շարք յայտնի ժամանակակիցներ նրա մասին վկայել են իրենց նամակներում եւ յուշերում: Որպէս գրող հանդէս է եկել չորս լեզուներով՝ հայերէն (յօդուածներ եւ մի վիպերգ), ռուսերէն (յօդուածներ), ֆրանսերէն (ինքնակենսագրական եւ ուղեգրական հատորներ) եւ իսպաներէն (աշխատութիւններ ռուս գրականութեան, լատինամերիկեան եւ իսպանական գրականութեան եւ մշակոյթի մասին, նաեւ յուշեր)¹:

* Ներկայացվել է 23. VIII. 2024 թ., գրախոսվել է 04. X. 2024 թ., ընդունվել է տպագրութեան 21. XI. 2024 թ.:

¹ Matiossian, Bakhchinyan. 2022.

Արմէն Օհանեանը միջազգային համբաւի է հասել 1910-ականներին, Փարիզում, այսպէս կոչուած, «Հիսաբանչ դարաշրջանի» ժամանակներում: Եւ բացառուում էր, որ այդ ժամանակաշրջանում Ֆրանսիայի մայրաքաղաքում յայտնուած որեւէ հայ մտաւորական եւ արուեստագէտ չառնչուէր ու համագործակցէր Արշակ Զօպանեանի հետ:

Բարեկամութեան եւ համագործակցութեան տարիներ

Օհանեանն ընդմիջումներով Փարիզում բնակուել է 1912–1931 թթ. եւ Արշակ Զօպանեանի հետ ունեցել ստեղծագործական ու բարեկամական յարաբերութիւններ: Բաւական է նշել, որ Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի Զօպանեանի ֆոնդում պահուում են Արմէն Օհանեանի 1916–1929 թթ. գրած 18 հայերէն եւ 47 ֆրանսերէն նամակներ², որոնք եւ հիմք են հանդիսացել սոյն ուսումնասիրութեան համար: Բազմազբաղ Զօպանեանը մշտապէս քաջալերել է Ֆրանսիայի մայրաքաղաքում արդէն որոշակի համբաւի հասած եւ ինքնահաստատուել փորձող հայրենակցուհուն ու ամէն կերպ նպաստել նրա գործունէութեան առաջխաղացմանը՝ պարի թէ գրական ասպարէզում, յաճախ դիմել է իր ծանօթներին՝ սատարելու պարուհու ելոյթներն ու գրական գործերի հրատարակութիւնը:

Յայտնի է, որ Արշակ Զօպանեանը համիդեան կոտորածների տարիներին (1894–1896 թթ.) Ֆրանսիայում սկիզբ առած հայանպաստ շարժման առաջամարտիկն էր: Առաջին աշխարհամարտի սկզբին Ֆրանսիայի եւ Օսմանեան կայսրութեան յայտնուելը թշնամական ճամբարներում ու Հայոց մեծ եղեռնը վերածնել են հայանպաստ շարժումը Ֆրանսիայում: 1916 թ. ապրիլի 9-ին առաւելապէս Զօպանեանի ջանքերով Սորբոնի համալսարանի ամֆիթատրոնում կայացել է Հայաստանին եւ հայերին յարգանքի տուրք մատուցող միջոցառում: Այդ ցերեկոյթին Զօպանեանը ներգրաւել է մի շարք ֆրանսիացի եւ հայ հանրային ու մշակութային գործիչների, նաեւ՝ Օհանեանին: Նա պարուհուն ուղարկել է իր “La vie et la rêve” («Կեանքը եւ երազը») արձակ եւ չափածոյ գործերի ֆրանսերէն թարգմանուած ժողովածուն (Փարիզ, 1913 թ.), որի վերաբերեալ Օհանեանը երախտագիտութեամբ է արտայայտուել իր երկու յաջորդական նամակներում: Մասնաւորապէս իր երկրորդ նամակում Օհանեանը Սորբոնի միջոցառման համար հրաւիրատուներ է խնդրել իր ֆրանսիական շրջապատի ականաւոր գրողների համար, որոնց մէջ էին Օսկար Միլոշը («Լեհ բանաստեղծ, որը շատ է հիանում ձեզնով», իրականում Միլոշը ծագումով լիտուացի էր), Լիւսի Դելարու-Մարդրուն («Որը հաւասարապէս գիտի ձեր պոեզիան, որը պաշտում է Արեւելքը»), Ռենէ Բրիմոնը («նա Լամարթինի մեծ զարմուհին է, նոյնպէս վաստակաւոր բանաստեղծ») եւ Նաթալի Բարնին («որին Ռեմի դը Գուրմոնը նուիրեց իր «Նամակներ Ամազոնուհուն»-ը»)³:

Միջոցառումը տեղի է ունեցել աւելի քան 3000 հանդիսականի ներկայութեամբ. ելոյթ են ունեցել ականաւոր ֆրանսիացի քաղաքական գործիչներ եւ արուեստագէտներ, հայ հանրային եւ մշակութային գործիչներ: Հայկական

² Տե՛ս Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարան, Արշակ Զօպանեանի ֆոնդ (այսուհետ՝ ԳԱԹ, ԱԶՅ), ք. I, № 7975–7992, ք. III, № 3273–3321:

³ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3308:

աւանդական տարազ հագած Օհանեանը պատմել է, որ ղեռահասութեան տարիներին ականատես է եղել Բաքուի հայոց կոտորածներին եւ արտասանել է ֆրանսերէն գրուած իր «Ֆրանսիային» երախտագիտական բանաստեղծութիւնը: Մի քանի օր անց Զօպանեանին գրուած նամակում նա նշել է, որ ապրիլի 9-ն անմոռանալի օր է եղել «մեզ՝ հայերիս համար»⁴:

Նոյն թուականի մայիսի 30-ին Զօպանեանի հիմնած Ֆրանսիայի Հայ մտաւորական միութիւնը հրատարակել է Փարիզի հայութեանն ուղղուած մի ֆրանսերէն չրաբերական, որը ստորագրել են Զօպանեանն ինքը, Արմէն Օհանեանը, նկարիչ Էդգար Շահինը եւ թաւջութակահար Տիրան Ալեքսանեանը: Նրանք տեղեկացրել են իրենց մտադրութեան մասին՝ ի պատասխան ապրիլին Սորբոնում կայացած հայանպաստ երեկոյի կազմակերպել համանման գրական-գեղարուեստական ցերեկոյթ «ի նշան Ֆրանսիայի, նրա ասպետական հոգու եւ ազնուական մշակոյթի հանդէպ հայ մտաւորականների երախտագիտութեան»⁵: Միջոցառման հասոյթը նախատեսուել է փոխանցել Ֆրանսիայի արուեստագէտների օգնութեան յանձնախմբին: Ֆրանսիային հայ ժողովրդի երախտագիտութիւնն արտայայտող այդ ցերեկոյթը կայացել է 1916-ի յունիսի 18-ին, Փարիզի «Գալո» դահլիճում: Այդ միջոցառմանը մասնակցել են Ֆրանսիայի նախագահի եւ վարչապետի անձնական ներկայացուցիչները. բանախօսել է Զօպանեանը, իսկ Օհանեանը կատարել է «Հոյ նազան իմ» պարերգը:

Ուշագրաւ է, որ Զօպանեանի եւ Օհանեանի անունները երբեմն հանդիպադրուել են: 1916-ի օգոստոսի 27-ին եւ սեպտեմբերի 3-ին հայազգի գրող-թարգմանիչ Էլիաս-Սարգիս Այթիարը յօդուածներ է հրապարակել «La vie feminine» («Կանանց կեանք») հանդէսում Զօպանեանի եւ Օհանեանի՝ որպէս փարիզաբնակ երկու ականաւոր հայ գործիչների մասին⁶: Իսկ 1917-ին նրանց անուններն անսպասելիորէն յիշատակուել են Շուէդիայում լոյս տեսած մի գրքոյկում: Երիտասարդ գրող, սոցիալ-դեմոկրատ շարժման գործիչ Կառլ Գուստաւ Օսիաննիլսոնը հրատարակել է «Այլն Հեղին ազնուականը. բաց նամակ» գրքոյկը, որտեղ խստօրէն դատապարտել է շուէդ հետախոյզ եւ աշխարհագրագէտ Այլն Հեղինի թուրքամէտ կողմնակալութիւնը: Գրելով հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին Օսիաննիլսոնը մասնաւորապէս նշել է. «Արշակ Զօպանեանը, Յովհաննէս Թումանեանը, Արմէն Օհանեանը, Ջիւանին, Դանիէլ Վարուժանը բանաստեղծներ են, որոնց համար ոչ մի երկիր եւ ոչ մի լեզու չպէտք է ամաչի»⁷: Յիրաւի, բաւական անսպասելի էր տակաւին մամուլում ֆրանսերէն մի քանի գործ հրատարակած պարուհու անունը տեսնել ականաւոր հայ գրողների շարքում:

Հետաքրքրական է նաեւ, որ կայացած գրող Զօպանեանը ֆրանսերէնից հայերէն է թարգմանել Օհանեանի առաջին գրական փորձերից մէկը՝ մի արձակ բանաստեղծութիւն, որը «Լուսին դէմքով ու արեւ ապարօշով աղուոր իշխանը» վերնագրով լոյս է տեսել 1917-ին, Փարիզի «Վերածնունդ» շաբաթա-

⁴ ԳԱԹ, ԱԶՖ, Բ. III, № 3309:

⁵ ԳԱԹ, ԱԶՖ, Բ. IX, № 613: Այս մասին լրատուութիւն տե՛ս «Ազգ» (Պոսթրն), 26. VI. 1916:

⁶ «Արձագանգ Փարիզի» (Փարիզ), 25. IX. 1916:

⁷ Ossiannilsson. 1917, 171.

թերթում⁸։ Նա հանդէսի մի օրինակ ուղարկել է Օհանեանին, որը պատասխանել է. «Իմ ամենամեծ ցանկութիւններից մէկն էր այն ձեր թարգմանութեամբ տեսնելը, ձեր, ով թարգմանութիւնները բնագրերից աւելի գեղեցիկ է դարձնում»⁹։ Տարիներ անց, Չօպանեանն Օհանեանին է ուղարկել նաեւ իր «Rosaie d'Arménie» («Հայաստանի վարդատան») գրքի երրորդ հատորը՝ Հայ միջնադարեան բանաստեղծութեան թարգմանութիւններով եւ Հայկական մանրանկարների պատկերազարդումներով։ Չօպանեանին յղուած նամակում Օհանեանը գրուատել է այս գիրքը՝ նկատելով. «Եթե այդ անհետացած դարերի քերթութիւնն ինքնին գրաւիչ է, դուք այն անհատականացնում էք մեզ համար՝ դարձնելով է՛լ աւելի նուրբ ու աւելի քնարական»¹⁰։ Ի դէպ, յետագայում իր «Քաղաքակրթութեան ճիւղաններում» գրքում Օհանեանը մէջբերել է Հայէններից մէկը (Քուչակի անուամբ) Չօպանեանի թարգմանութեամբ¹¹։

Նոյն 1917-ին Չօպանեանը Օհանեանին հրաւիրել է մասնակցելու յունուարի 19-ին կայանալիք Հայ երգչախմբային միութեան Փարիզի Գիւղատնտեսական դահլիճում պատրաստուող ցերեկոյթին՝ ի նպաստ Կովկասի Հայ փախստականների։ Չօպանեանը բանախօսել է Արեւելքում Հայ կանանց եւ Յեղասպանութեան ժամանակ նրանց կրած տառապանքների մասին, իսկ գեղարուեստական մասում հանդէս է եկել նաեւ Հայկական տարազ հագած, ֆրանսիական մամուլի բնորոշմամբ՝ «մեծ արուեստագիտուհի Արմէն Օհանեանը, որն ինքը Հայաստանի վշտի մարմնացումն էր»¹²։

Երբ Առաջին աշխարհամարտի տարիներին Օհանեանը նիւթական դժուարութիւններ է ունեցել, Չօպանեանը նրան ծանօթացրել է Փարիզի «Օպերա կոմիկ» թատրոնին հետ առնչուած Ներսէսեանի հետ՝ փորձելով պարուհու համար այնտեղ մշտական աշխատանք ապահովել¹³։ Նա նաեւ ոմն Գէորգեանին առաջարկել է որպէս գնորդ այն նկարի, որն Օհանեանը ստացել էր իր երբեմնի սիրեցեալից նկարիչ եւ գրող Էմիլ Բեռնարից։ Նկարի համար նա ակնկալել է 3000–4000 ֆրանկ, սակայն վաճառքը ձախողուել է։ Այս առթիւ Օհանեանը Չօպանեանին գրել է. «Մի՛ անհանգստացեք այս խոզերի (ներողութիւն) պատճառով։ Թող նրանք կորչեն-գնան»¹⁴։ Չօպանեանը նրան ուղեկցել է նաեւ ճանաչուած իմպրեսարիո Կլեման Ֆիշլֆէի մօտ, որը կազմակերպել է պարուհու ելոյթն Իտալիայում¹⁵։ Այդ առթիւ Չօպանեանը նաեւ նամակով դիմել է Միլանում ապրող իր հայ ծանօթներին (Նշան Տէր-Ստեփանեան, Ռափայէլ Պազարճեան)՝ խնդրելով դիւրութիւն ընձեռել Օհանեանին¹⁶, եւ նրա խնդրանքով միլանաբնակ Հայկ Ղազարոսեանը դիմաւորել է պարուհուն քաղաքի

⁸ Տե՛ս «Վերածնունդ» (Փարիզ), 14. VIII. 1917, 36–37։ Բանաստեղծութեան թարգմանութեան ձեռագիրը տե՛ս ԳԱԹ, ԱԶՅ, ք. X, № 916ա։

⁹ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7987։

¹⁰ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3322։

¹¹ Ohanian. 1921, 242–244.

¹² Pignot, La resurrection de l'Arménie, «L'Éclair», 22. I. 1917.

¹³ Տե՛ս ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3295։ Հաւանաբար խօսքը Փարիզում Պարսկաստանի պատուոյ Հիւպատոս Ներսէս խան Ներսէսեանի մասին է։

¹⁴ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3313։

¹⁵ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3302։

¹⁶ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7251։

երկաթուղային կայարանում եւ սատարել տարբեր հարցերով: «Մի քանի րոպէս առաջ հրաշալի հեռագիր եկաւ Տուրինից,— գրել է Օհանեանը Զօպանեանին Միլանից:— Նրանք ուզում էին ինձ քաջալերել: Ես շատ յուզուած եմ իմանալով, որ դուք եղբայրական հոգատարութեամբ հետեւում էք ինձ հեռուից: Ձեզ եմ ուղարկում իմ ամենից բարեկամական շնորհակալութիւնը: Այո՛, դուք շատ աւելին էք, Զօպանեան, ինձնից մեծահոգի, երեւի այն պատճառով, որ ձեր շրջապատը, ի տարբերութիւն իմի, արագ չի սառեցրել ձեր հոգին: ... Ինձ համարէ՛ք ձեր քոյրը եւ ներեցէ՛ք ինձ իմ նեարդային, թերահաւատ ու ծանր բնավորութեան համար, որը ձեզ բազմիցս վրդովեցրել է: Դրանք համարէ՛ք իմ նեարդագարութեան ապացոյցներ եւ եղէ՛ք այնքան ներողամիտ, որքան որ մինչ այժմ էք եղել»¹⁷:

Դարձեալ Արշակ Զօպանեանի միջնորդութեամբ Արմէն Օհանեանը ծանօթացել է Նոբէլեան մրցանակակիր երկու գրողների, Յրանսիայում Անատոլ Ֆրանսի, Բելգիայում Մորիս Մետերլինկի հետ: Յատկապէս Ֆրանսի հետ ծանօթութիւնը 1916-ին վճռական է եղել Օհանեանի համար: Նա Օհանեանին խորհուրդ է տուել գրի առնել իր մանկութեան յուշերը եւ կեանքի պատմութիւնը, որից յետոյ ոգեւորուած պարուհին գրիչ է վերցրել, իսկ Զօպանեանը խմբագրել է նրա ֆրանսերէն շարադրանքը: Ձեռագիրը կարդալուց յետոյ Ֆրանսը պարուհուն գնահատական նամակ է գրել: Այդ անակնկալը ստանալով Օհանեանը շտապել է իր ուրախութեանը հաղորդակից դարձնել Զօպանեանին եւ նրան է ուղարկել մի նամակ՝ Ֆրանսի նամակի պատճէնի հետ՝ նշելով. «Ես գիտեմ, որ ոչ ոք ձեզ պէս երջանիկ չի լինի իմ ուրախութեան համար»¹⁸:

1918 թուականի սկզբին Զօպանեանը տեղեկացրել է գրող եւ հրատարակիչ Բեռնար Գրասէին, որ Օհանեանը գրել է Հայաստանի մասին շատ հետաքրքիր մի գիրք եւ որ մտադիր է հրատարակել իր յիշողութիւնների հատորը: Ու թէեւ տնտեսական վիճակը նպաստաւոր չի եղել անյայտ հեղինակների վրայ «խաղաղորդ» կատարելու, Գրասէն բացառութիւն է արել հայ պարուհու համար: Սակայն Օհանեանի գրքից առաջ Գրասէն հրատարակել է «Հայ կինը» գրքոյկը (Archag Tchobanian, La Femme arménienne: conférence faite à Paris, le 18 janvier 1917. Paris: B. Grasset, 1918), որը Զօպանեանի՝ 1917 թուականի յունուարի 18-ին կարդացած դասախոսութեան շարադրանքն է: Այստեղ նա Օհանեանին յիշել է Ազնիւ Հրաչեայի եւ Սիրանոյշի նման դերասանուհիների մասին խօսքից յետոյ: «Այս էլիտար արուեստագէտների մէջ ամենամեծերից մէկը՝ օրիորդ Արմէն Օհանեանը, որը հիանալի կերպով միախառնեց Արեւելքի ողջ տառապանքն ու երազանքն իր պար-բանաստեղծութիւնների մէջ, հասաւ մինչեւ Փարիզ եւ Լոնդոն՝ ծափահարել տալով հայուհու տաղանդը»¹⁹: Զօպանեանի այս գրքոյկը կարդալով Օհանեանը մի անթուակիր նամակում գրել է. «Ես կարդացի ու եւս մեկ անգամ տեսայ ձեր ողջ քնքշութիւնը դժբախտ Հայաստանի եւ վշտալի հայուհու հանդէպ: Շնորհակալ եմ նաեւ ինձ

¹⁷ ԳԱԹ, ԱԶՖ, ք. I, № 7983:

¹⁸ ԳԱԹ, ԱԶՖ, ք. III, № 7988: Այս անթուակիր նամակին կից կայ նաեւ Ֆրանսի նամակի պատճէնը՝ Օհանեանի ձեռագրով:

¹⁹ Tchobanian. 1918, 27.

նուիրած հմայիչ տողերի համար: Ես շուտով ձեզ կ'ուղարկեմ իմ գիրքը. գուցէ դուք նոյնպէս կը տեսնէք իմ ողջ սէրը երկրիս հանդէպ՝ ձեր գրածից պակաս հանդիսաւոր էջերում: Երկու ամսից կը հրատարակեմ»²⁰:

Օհանեանի առաջին գիրքը՝ «Շամախեցի պարուհին», լոյս է տեսել 1918-ին, Փարիզում (Armén Ohanian, La danseuse de Shamakha, Grasset, Paris, 1918), ունեցել մեծ յաջողութիւն, վերահրատարակուել ու թարգմանուել վեց լեզուով (անգլերէն, իսպաներէն, գերմաներէն, շուեդերէն, ֆիններէն, յետագայում՝ եւրայերէն): Այս յաջողութեան մէջ, անշուշտ, կարեւոր դեր է ունեցել նաեւ Անատոլ Յրանսի նամակ-առաջաբանը: Գրքի հրատարակութիւնից յետոյ Օհանեանը Զօպանեանին է յղել մի երախտագիտական նամակ, որտեղ մասնաւորապէս ասել է. «Ես անկեղծօրէն շնորհակալութիւն եմ յայտնում, ոչ այնքան իմ գիրքը «Գրասէ» [հրատարակչութիւնում] հրատարակուած տեսնելու համար, այլեւ ինձ այնքան նրբօրէն ապացուցելու համար, որ ես չէի սխալուած՝ երկար ժամանակ ձեզ համարելով մէկն իմ անկեղծ բարեկամներից, որոնց թիւն այժմ գրոյի է հասել»²¹:

Օհանեանը եւ Զօպանեանը շարունակել են հանդէս գալ միեւնոյն գեղարուեստական յայտագրերում: 1919-ի մայիսի 9-ին Փարիզի «Էդուարդ VII» թատրոնում տեղի է ունեցել հայկական երեկոյ, որին Օհանեանը մասնակցել է իր պար-բանաստեղծութիւններով, իսկ Զօպանեանը բանախօսել է: Նոյն թուականի մայիսի 28-ին Քաղաքացիական ճարտարագէտների սրահում Հայաստանի Հանրապետութեան տարեկիցի առթիւ կազմակերպուել է երեկոյթ, որի ընթացքում բանախօսել են Պօղոս Նուպարը, Աւետիս Ահարոնեանը, Արշակ Զօպանեանը, իսկ գեղարուեստական մասում դարձեալ հանդէս է եկել Արմէն Օհանեանը՝ ի թիւս այլ հայ եւ ֆրանսիացի արուեստագէտների²²: Դարձեալ 1919-ի յունիսի 2-ին Արմէն Օհանեանը մասնակցել է Փարիզի «Անտուան» թատրոնում «Յրանսիայի եւ դաշնակիցների ջանքը» ընկերակցութեան կազմակերպած միջոցառմանը՝ ի պատիւ Հայաստանի, որտեղ բանախօսել է Յրանսիայի նախկին վարչապետ Պոլ Պէյլլովէն, իսկ Զօպանեանը կարդացել է իր բանաստեղծութիւններից հատուածներ: Հանդէսի ողջ հասոյթը տրամադրուել է Փարիզի Հայ Տիկնանց Միութեանը՝ ի նպաստ Հայաստանի որբերի²³:

1920-ականներին Արմէն Օհանեանը շարունակել է ելոյթներ ունենալ Փարիզում եւ այլուր, հրատարակել նոր ֆրանսերէն գրքեր՝ պահելով իր կապը Զօպանեանի հետ: Վերջինս 1927-ին հայ արուեստագէտներին նուիրուած իր յօդուածաշարում յիշել է նաեւ «Տիկնի Արմէն Օհանեանը, որ կը շարունակէ ֆրանսական հասարակութիւնը հմայել իր պարսկական քերթուածներու վրդովիչ ստեղծագործութիւններով»²⁴: 1929-ի յունիսի 9-ին Զօպանեանին գրած նամակում պարուհին խոստովանել է, որ Առաջին աշխարհամարտից յետոյ Արեւմուտքում տիրող քաղաքական անորոշութիւնը, ներառեալ համաշխարհային յեղափոխութեան ուտոպիան, որը սնուցուել է խորհրդային վարչակար-

²⁰ ԳԱԹ, ԱԶՖ, Բ. III, № 3312:

²¹ ԳԱԹ, ԱԶՖ, Բ. III, № 3317:

²² «Ժողովուրդ» (Կ. Պոլիս), 28. V. 1919: Տե՛ս նաեւ՝ Լ. Ի. Թէս. Հայկական հանրապետութեան տարեգարձը Բարիզի մէջ. — «Ժողովուրդ», 02. VI. 1919:

²³ «Վերածնունդ» (Փարիզ), 10. VII. 1919, 270–271:

²⁴ «Ապագայ» (Փարիզ), 20. VIII. 1927:

գի ծնունդով, ստիպել են իրեն «ազատուել կեանքի եւ գրականութեան ցանկացած ուղիով»²⁵:

1931-ի հոկտեմբերին Օհանեանը հրատարակել է իր վերջին ֆրանսերէն գիրքը՝ «Օձահմայի ծիծաղը» եւ նոյեմբերին մի օրինակ մակագրել է Զօպանեանին. «Սիրով իմ ընկեր, բանաստեղծ Զօպանեանին, հեղինակի այս դատը ծիծաղը»²⁶: Դրանից յետոյ նա մեքսիկացի ամուսնու՝ դիւանագէտ եւ թարգմանիչ Մակեդոնիո Գարզայի հետ մեկնել է Մեքսիկա, եւ Զօպանեանի հետ նրա կապը, ամենայն հաւանականութեամբ, ընդհատուել է: Պարուհին Փարիզ է վերադարձել 18 տարի անց՝ 1949-ին: Այս թուականին նա, հաւանաբար, հանդիպել է Զօպանեանին. պահպանուել է 1949-ի վերջին Զօպանեանին գրուած մի նամակ, որտեղ պարուհին շարունակել է իր սիրտը բացել բարեկամի առաջ՝ այս անգամ արդէն՝ հասուն տարիքի կենսափոխակերպութեամբ: Նա մասնաւորապէս գրել է. «Մեր տարիքում աւելի շատ պիտի ծափահարուի իմաստութիւնը, քան ատելութեան կամ նախանձի կրքերը: Սակայն մենք մարդ ենք մնում ցանկացած տարիքում. մարմինը ծերանում է, բայց հոգին մնում է երիտասարդ եւ թրթռում է ու տառապում եւ ուզում է հաւատալ յաւերժական ջերմութեանը: Բոլորիս մէջ մի քիչ խելագարներ ու բանաստեղծներ կան»²⁷:

Օհանեանը Փարիզում եղել է նաեւ 1951-ին, սակայն մեզ յայտնի չէ, թէ նա հանդիպել կամ նամակակցել է իր վաղեմի բարեկամի հետ:

Բարեկամութեան այլ դրսեւորումներ

Չափազանց ցածր է իննի՝ ասելով, որ փարիզեան տարիներին Օհանեանի լաւագոյն հայ բարեկամը եղել է Զօպանեանը: Նրանք փոխադարձ մեծ համակրանք են տածել միմեանց հանդէպ եւ գնահատել են իրար, օտարութեան մէջ բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարող գերզգայուն պարուհին Զօպանեանին համարել է իր անկեղծ եւ սիրելի բարեկամը, գուցէ եւ միակը²⁸, որին պատմել է իր ցաւերը եւ հիասթափութիւնները: Նկատենք, որ Օհանեանի բնաւորութիւնը դիւրին չի եղել, յատկապէս աչքի է ընկել կասկածամտութեամբ: Էդգար Շահինը Զօպանեանին գրած մի նամակում Օհանեանի մասին գրել է. «... շատ զարմանալի աղջիկ մ'է: Միտքը բան մը դրած ըլլայ նէ՝ անկարելի է խօսք հասկցնել: Զիս տեսնալուն պէս կարծեց, որ քու կողմանէդ ambassadeur (դեսպան – Վ. Մ., Ա. Բ.) եկեր եմ: 1, 2, 3 հազար անգամ C'est Tchobanian qui vous a envoyé (Զօպանեանն է ձեզ ուղարկել – Վ. Մ., Ա. Բ.), ըսաւ. պատուոյ վրայ երդումը անգամ իր վրայ ազդեցութիւն չունի: Շատ աղուոր կողմեր ունի, շատ տաղանդաւոր աղջիկ է, բայց մէկ կողմ ալ ունի, որ բոլորովին մեր խօսքը հասկնալու եղանակին հակառակ բան է: Մաշայով գործածուելիք աղջիկ մ'է»²⁹:

²⁵ ԳԱԹ, Ա.ՉՅ, Բ. III, № 3322:

²⁶ Գրքի օրինակը տե՛ս ԳԱԹ-ում պահուող Զօպանեանի անձնական գրադարանում:

²⁷ ԳԱԹ, Ա.ՉՅ, Բ. III, № 3331:

²⁸ ԳԱԹ, Ա.ՉՅ, Բ. I, № 7976:

²⁹ ԳԱԹ, Ա.ՉՅ, Բ. I, № 5261:

«Մաշայով» (այսինքն՝ կրակխառնիչով) գործածուելիք Օհանեանը թերահաւատ է եղել յատկապէս հայրենակիցների հանդէպ, նախապէս կասկածանքով է վերաբերուել Զօպանեանին նոյնպէս: Ինչպէս նա գրել է անթուակիր մի նամակում. «Ես կարծում էի, որ դուք իմ թշնամին էք, ինչպէս բոլոր հայերի մասին էի մտածում: Յանկարծ գգացի, որ դուք իմ թշնամին չէք ու այլեւս դադարեցի զգուշանալ ձեզնից, ինչպէս որոշակի պատճառով զգուշանում եմ միւսներից: Եվ հաւատացէ՛ք ինձ, քանի որ ուրիշների կոպտութիւնը ցաւ է պատճառում ինձ, ձեզ նման մէկի յարգանքն ինձ հանգստացնում է, որ աշխարհում դեռեւս կան մարդիկ, որոնք գիտեն ինչպէս վարուել կնոջ հետ»³⁰: Իր ունեցած կտաւի վաճառքի ձախողումից յետոյ նա գրել է. «Եթե ինձ վիճակուած է կեանքում գնալ հոսանքին հակառակ, ես դա կ'անեմ առանց այս վաճառականների օգնութեան: Երբ ես խնդրեցի պարսիկների աջակցութիւնը, նրանք իսկապէս աւելի առատաձեռն գտնուեցին: Բացառութեամբ ձեզնից, ես իմ հայրենակիցներից տհաճութիւնից բացի այլ բան չեմ տեսել»³¹: Մէկ այլ առիթով էլ նա յիշեցրել է Զօպանեանին. «Մի օր Փարիզի թիւ մէկ կուրտիզանուհի Լիան դէ Պուֆին միսս Բարնիին ասաց. «Տեսնու՞մ ես այս մարդկանց, որոնք խելագարուում են ինձ համար: Եթե վաղը նոյն մարդիկ տեսնեն ինձ աղքատ, նրանք ինձ սովամահ կը թողնեն»: Նա գիտէր հիացմունքի եւ յարգանքի գինը, ինչպէս որ ես գիտեմ այս կուրտիզանուհուն: Բայց մի՛ վրդովուէք, սիրելի՛ Զօպանեան, ես երիտասարդ եմ: Ճակատագիրն ինձ թելադրեց արհամարհել մարդկանց եւ չարհամարհուել նրանց կողմից»³²: Զօպանեանին գրած նամակներում նա ազատօրէն է արտայայտուել իրեն նեղութիւն պատճառած մարդկանց մասին տալով նրանց «իպօպօտամներ» (գետածիւր)³³ եւ այլ ածականներ, բայց եւ այնպէս, հոգու խորքում չարութիւն չի ունեցել: «Սիրելի Շոպանեան (sic), մոռացէ՛ք որ այնչափ չար էի եւ լի դառնութեամբ Փարիզում: Կեանքս ինձ շատ էր դառնացրել: Մի քանի գեղեցիկ ժեստ մեր հայերուց տեսայ՝ ինձ մոռացնել տուեցին հազար դժուարութիւններ»³⁴, – գրել է նա 1916-ին:

Օհանեանի՝ Զօպանեանին ուղղուած շատ նամակներ լի են երախտագիտութեամբ, հոգեկցութեամբ, անկեղծ խոստովանութիւններով: Օրինակ, 1916-ին, հոգեկան մի խռովքի պահին նա գրել է. «Ահ, երբ պիտի այդ անիծեալ բեմը թողնեմ եւ մոռանամ ընդմիշտ թատրոն բառը»³⁵, իսկ նոյն թուականին գրուած մէկ այլ նամակում էլ ասել է. «Որչափ որ եւրոպացիք շան նման են ինձ հետ վարուել, այնչափ դուք քնքոյշ վարիճի (sic) նման էք ինձ հետ վարուում: Ես կարօտ էի, տարիներ կարօտ էի այդ մաքուր եղբայրական սիրոյ. Ընդունեցէ՛ք այդ չոր թղթի վրայ ամբողջ իմ խոցոտուած սրտիս շնորհակալութիւնը: Ձեր քոյր Արմէն»³⁶:

³⁰ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3284:

³¹ ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3313:

³² ԳԱԹ, ԱԶՅ, ք. III, № 3278:

³³ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7983:

³⁴ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7984:

³⁵ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7991:

³⁶ ԳԱԹ, ԱԶՅ, ք. I, № 7979:

Историко-филологический журнал • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

³⁷ ԳԱԹ, ԱԶՅ, Բ. I, № 7987:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան, Արշակ Չօպանեանի ֆոնդ, բաժին I, 5261, 7251, 7976, 7983, 7984, 7987, 7988, 7991, 7979, բաժին III, 3278, 3284, 3295, 3302, 3308, 3309, 3312, 3313, 3317, 3322, 3331, բաժին IX, 613, բաժին X, 916ա:

Լիւթիս Գ., Հայկական հանրապետութեան տարեդարձը Բարիզի մէջ.– «Ժողովուրդ» (Վ. Պոլիս), 2. VI. 1919:

Հայասիրական հանդէս.– «Վերածնունդ» (Փարիզ), 10. VII. 1919:

Հայկական երեկոյթ մը Բարիզի մէջ.– «Ժողովուրդ» (Վ. Պոլիս), 28. V. 1919:

Մանր լուրեր.– «Արծազանգ Փարիզի» (Փարիզ), 25. IX. 1916:

Չօպանեան Ա., Մեր արուեստագէտները (Զարիֆեան-Արմէնեան ներկայացման առթիւ).– «Ապագայ» (Փարիզ), 20. VIII. 1927:

Օհանեան Ա., Լուսին դէմքով ու արեւ ապարօշով աղուոր իշխանը.– «Վերածնունդ» (Փարիզ), 14. IX. 1917:

Matiossian V., Bakhchinyan A. 2022, A Woman of the World: Armen Ohanian, The “Dancer of Shamakha.” Fresno, The Press of California State University, 504 p.

Ohanian A. 1921, Dans les griffes de la civilisation. Paris, Bernard Grasset, 272 p.

Ossiannilsson K. G. 1917, Sven Hedin Nobleman: An Open Letter from Karl Gustav Ossiannilsson, translated by H. G. Wright, London, T. Fisher Unwin, 226 p.

Pignot É., La resurrection de l’Arménie, «L’Éclair», 22. I.1917.

Tchobanian A., 1918, La femme arménienne. Paris, Bernard Grasset, 102 p.

ОТНОШЕНИЯ АРМЕН ОГАНЯН И АРШАКА ЧОБАНЯНА

ВАРԴԱՆ ՄԱԹԻՕՏՅԱՆ

ԱՐՇՎԻ ԲԱԽՇԻՆՅԱՆ

Р е з ю м е

Ключевые слова: Армен Оганян, Аршак Чобанян, переписка, творческие и дружеские отношения, проармянские мероприятия в Париже, Анатоль Франс.

Танцовщица, писательница, актриса и переводчица Армен Оганян (София Пирбудагян, 1887, Шамаха–1976, Мехико) жила в Париже с 1912 по 1931 год и поддерживала длительные профессиональные отношения с Аршаком Чобаняном.

В архиве Чобаняна в Государственном музее литературы и искусства Армении хранится 65 писем –18 на армянском и 47 на французском – адресованных ему танцовщицей. Они вместе участвовали в проармянских мероприятиях в Париже. Чобанян активно интересовался художественным и литературным творчеством Оганян; он часто знакомил ее со своими

Պատմամշակութային հիմքեր • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

Арцви Бахчинян – к. ф. н., старший научный сотрудник отдела армянских общин и диаспоры Института истории НАН РА. Научные интересы: армянские общины и диаспора, исторические и культурные связи армянского народа с миром, история армянской культуры, выдающиеся мировые деятели армянского происхождения. Автор 15 монографий и более 100 статей. ORCID:0000-0001-8637-6946. artsvi@yahoo.com

VARTAN MATIOSSIAN
ARTSVI BAKHCHINYAN

S u m m a r y

Dancer, writer, actress and translator Armen Ohanian (Sofia Pirbudaghian, 1888, Shamakha –1976, Mexico City) lived in Paris from 1912–1931 and maintained a long-term professional relationship with Archag Tchobanian.

Tchobanian's archive in the State Museum of Literature and Art of Armenia contains 65 letters (18 in Armenian and 47 in French) addressed to him from Ohanian. They participated in pro-Armenian events in Paris. Tchobanian was actively interested in Ohanian's artistic and literary work; he often introduced her to his Armenian and French friends to support her dance performances and publication of her literary works. Tchobanian translated one of Ohanian's first

works from French into Armenian, edited her French works, and wrote about her art in his writings. His close ties with French literary circles helped Ohanian to get acquainted with important writers of the time and establish herself in French literature. The most remarkable example was Tchobanian's initiative to introduce Ohanian to Anatole France, who prefaced *La danseuse de Shamakha*, Ohanian's first and most celebrated book in French.

Vartan Matiossian – Candidate of Historical Sciences, Executive Director of the Eastern Prelacy of the Armenian Apostolic Church in the USA. Scientific interests: history of Armenia, Armenian literature, Armenian language, Armenians in Latin America, Kostan Zarian. Author of 8 monographs and more than 150 articles. ORCID:0009-0008-5816-5330. varnyl@yahoo.com

Artsvi Bakhchinyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of Armenian Communities and Diaspora at the Institute of History of NAS RA. Scientific interests: Armenian communities and Diaspora, historical and cultural ties of the Armenian people with the world, history of Armenian culture, prominent world figures of Armenian origin. Author of 15 monographs and more than 100 articles. ORCID:0000-0001-8637-6946. artsvi@yahoo.com